Կարգապահական գործ ԿԳ-14133

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի հունվարի 16-ի թիվ 6-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ ԿԳ/5-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՌՈՒԲԵՆ ՉԻԲՈՒԽՉՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ նաև՝ Պալատ) խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ), նիստը նախագահող՝ Տիգրան Խուրշուդյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի, Լուսինե Սահակյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Ալեքսանդր Միրունյանի, Երվանդ Վարոսյանի և Մարտուն Փանոսյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Ռուբեն Չիբուխչյանին (արտոնագիր 760) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից ՀՀ փաստաբանների պալատի նախագահին 27.10.2014թ. տրամադրված տեղեկանքի Ռուբեն Չիբուխչյանն ունի 25.000 ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2014թ. մայիսից մինչև 2014թ. սեպտեմբեր (ներառյալ) ամիսների համար:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը և գործի հանձնումը Խորհրդին.

27.10.2014թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թիվ 363-Ա/ԿԳ-14133 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Ռուբեն Չիբուխչյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1 կետի խախտման հատկանիշներով:

27.11.2014թ.-ին կարգապահական գործը հանձնվել է Պալատի Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2015 թվականի հունվարի 16-ին, ժամը՝ 18.50-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

3. Պատասխանողի բացատրությունները.

Փաստաբան Ռուբեն Չիբուխչյանը թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի և ժամի մասին, սակայն Խորհրդին նիստին անհայտ պատճառներով չէր ներկայացել:

4. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) փաստաբան Ռուբեն Չիբուխչյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 19.10.2007թ. (հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 16.01.2015թ. տրամադրված տեղեկանքով),

2) փաստաբան Ռուբեն Չիբուխչյանն ունի 25.000 ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2014թ. մայիսից մինչև 2014թ. սեպտեմբեր (ներառյալ) ամիսների համար (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 27.10.2014թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահին տրամադրված տեղեկանքով),

3) փաստաբան Ռուբեն Չիբուխչյանն իր անդամավճարի պարտքը մասնակի, այն է՝ 20.000 ՀՀ դրամի չափով մարել է 28.10.2014թ.՝ կանխիկ վճարելով Պալատի դրամարկղ:

16.01.2015թ. դրությամբ Ռուբեն Չիբուխչյանի՝ թիվ ԿԳ-14133 կարգապահական վարույթով պարտքի չափը կազմում է 5.000 ՀՀ դրամ (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 16.01.2015թ. Խորհրդին տրամադրված տեղեկանքով):

5. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 16.01.2015թ. տրամադրված տեղեկանքի համաձայն Ռուբեն Չիբուխչյանի (արտոնագիր 760, ստացված՝ 19.10.2007թ.) նկատմամբ 2007-2014թթ. ընկած ժամանակահատվածում 2 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ անդամավճարի պարտք ունենալու մասով.

- 22.03.2011թ. հարուցվել է վարույթ, 19.05.2011թ. Խորհրդի թիվ 10/3 որոշմամբ վարույթը կարճվել է (արտոնություն է կիրառվել),
- 12.03.2014թ. հարուցվել է վարույթ, 18.04.2014թ. Խորհրդի թիվ 58ԿԳ/1-Ա որոշմամբ վարույթը կարճվել է (արտոնություն է կիրառվել):

6. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Ռուբեն Չիբուխչյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ Փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար: Նույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ:

Համաձայն «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի՝ «Փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար:»:

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ.-ին թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի (այսուհետև Կարգ) 7-րդ կետի՝ Փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը, իսկ նույն Կարգի 21-րդ կետով սահմանվում է՝ «Ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատասխանատվության:»:

Համաձայն Կարգի 17-րդ կետի՝ «Առաջին անգամ առնվազն երեք ամսվա համար անդամավճար չվճարած փաստաբանի կողմից իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթով մինչև Պալատի խորհրդի կողմից կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշում կայացնելը, անդամավճարի պարտքն ամբողջությամբ մարելու դեպքում, կարգապահական վարույթն ենթակա է կարճման: Փաստաբանի կողմից

անդամավճար չվճարելու հիմքով հարուցված երկրորդ կամ հետագա ցանկացած կարգապահական վարույթ չի կարող կարճվել հարուցելուց հետո պարտքի մարման հիմքով: ...»: Նշված Կարգը հաստատվել է 26.12.2013թ.-ին, ուստի 16-րդ և 17-րդ կետերում նշված ժամկետները պետք է հաշվարկել այդ ժամանակահատվածից սկսած:

Վերոնշված կանոնների վերլուծությունից հետևում է, որ սահմանված ժամկետներում անդամավճար չվճարելու համար փաստաբանն ենթակա է պատասխանատվության, բացառությամբ Կարգի 17-րդ կետով սահմանված դեպքի, որի կիրառման համար անհրաժեշտ է հետևյալ պայմանների պարտադիր առկայությունը՝

- կարգապահական վարույթը պետք է հարուցված լինի առաջին անգամ առնվազն երեք ամսվա համար անդամավճար չվճարած փաստաբանի նկատմամբ և
- մինչև Պալատի խորհրդի կողմից կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշում կայացնելն անդամավճարի պարտքը պետք է ամբողջությամբ մարված լինի:

Սույն դեպքում, թեև փաստաբան Ռուբեն Չիբուխչյանը համաձայն 16.01.2015թ.-ին ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից տրված տեղեկանքի իր անդամավճարի պարտքը մասնակի, այն է՝ 20.000 ՀՀ դրամի չափով մարել է, սակայն նրա նկատմամբ Կարգի ընդունումից հետո մինչև սույն կարգապահական վարույթով որոշում կայացնելն անդամավճար չվճարելու հիմքով հարուցվել է կարգապահական վարույթ և վարույթը կարճվել է, ուստի սույն դեպքում Կարգի 17-րդ կետով սահմանված դրույթները կիրառելի չեն և նա ենթակա է պատասխանատվության: Սույն վարույթը Կարգի գործողության ժամանակահատվածում երկրորդն է, հետևաբար ենթակա է կիրառման Կարգի 17-րդ կետի պահանջն առ այն, որ՝ «....Փաստաբանի կողմից անդամավճար չվճարելու հիմքով հարուցված երկրորդ կամ հետագա ցանկացած կարգապահական վարույթ չի կարող կարճվել հարուցելուց հետո պարտքի մարման հիմքով: ...»:

Միևնույն ժամանակ, Խորհուրդն արձանագրում է, որ կարգապահական տույժ կիրառելիս Խորհուրդը հաշվի է առնում այն հանգամանքը, որ փաստաբան Ռուբեն Չիբուխչյանն իր անդամավճարի պարտքը մասնակի մարել է:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9. հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով, Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Ռուբեն Չիբուխչյանին (արտոնագիր 760) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի պահանջների խախտման համար:
2. Փաստաբան Ռուբեն Չիբուխչյանի (արտոնագիր 760) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:
3. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Ռուբեն Չիբուխչյանին:

Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

Նիստը նախագահող՝ Տիգրան Խուրշուդյան